


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. մարտին /վերլուծություն/


2003թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 5011 գործարքներ, որոնք 2002թ. մարտի համեմատ աճել են 20.3%-ով, իսկ 2003թ փետրվարի համեմատ՝ 10.8%-ով:

2003թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. մարտին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2395 օտարման գործարքների 90.0%-ը կազմել են առուվաճառքները, 9.2%-ը նվիրատվությունները և 0.8%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

44.4%-ն արձանագրվել են Երևան քաղաքում, իսկ 46.9%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. մարտին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 30.7%-ով, իսկ 2003թ. փետրվարի համեմատ 12.2%-ով: 2003թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի 956 առուվաճառքի գործարքների 65.1%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.9%-ով, իսկ 2002թ. մարտի համեմատ նվազել է 10.9%-ով:

2003թ. մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. մարտին համարժեք է 590.0 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		մարտ 2003թ.	փետրվար 2003թ.	մարտ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	375.3	355.8	257.0
Արաբկիր	150.0-550.0	262.4	246.5	165.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	149.4	141.2	95.0
Նոր-Նորք	90.0-240.0	128.3	122.5	89.0
Ավան	90.0-190.0	117.2	112.3	82.0
Էրեբունի	90.0-300.0	132.7	127.5	86.0
Շենգավիթ	80.0-250.0	127.6	125.0	87.0
Դավթաշեն	100.0-250.0	142.8	136.9	88.0
Աջափնյակ	80.0-220.0	125.9	121.5	75.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	126.6	122.6	86.0
Նուբարաշեն	50.0-100.0	61.6	56.8	38.0
Երևան	50.0-970.0	159.1	151.7	104.4

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

2003թ. մարտին Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 4.9%, իսկ տարեկան աճը՝ 52.4%: Վերլուծության արդյունքում կարելի է կանխատեսել, որ Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական գների աճման միտումը դեռևս կպահպանվի:

2003թ. մարտին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 371 բնակարաններ: 2003թ. մարտին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և

ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			մարտ 2003թ.	փետրվար 2003թ.	մարտ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	61.8	61.2	57.8
	Ապարան	18.0-40.0	26.9	26.8	25.4
	Թային	18.0-40.0	24.5	23.5	20.5
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	53.3	52.8	51.8
	Մասիս	20.0-90.0	53.7	53.6	49.8
	Վեդի	20.0-45.0	30.9	30.0	28.2
	Արարատ	22.0-40.0	31.0	31.0	26.6
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	82.2	77.4	66.1
	Արմավիր	21.0-58.0	44.5	42.9	40.9
	Մեծամոր	17.0-50.0	30.5	30.4	28.3
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.2	29.0
	Գավառ	20.0-45.0	29.9	29.3	28.8
	Մարտունի	18.0-38.0	28.9	28.5	27.4
	Վարդենիս	10.0-21.0	16.8	16.8	15.7
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	59.9	59.5	56.9
	Ստեփանավան	20.0-48.0	32.9	30.0	28.6
	Սյիտակ	17.0-30.0	23.5	23.1	21.2
	Ալավերդի	15.0-40.0	25.1	24.7	22.7
	Տաշիր	15.0-28.0	18.9	18.5	17.4
Կոտայք	Արույան	40.0-110.0	81.7	80.0	71.5
	Լոր Հաճն	35.0-75.0	50.9	50.4	49.3
	Բյուրեղավան	15.0-45.0	34.9	34.6	33.5
	Եղվարդ	28.0-55.0	39.8	39.4	36.1
	Հրազդան	18.0-45.0	29.8	29.4	26.7
	Ծաղկաձոր	22.0-95.0	74.5	74.1	74.5
	Չարենցավան	13.0-55.0	30.2	30.1	26.3
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	63.5	63.5	57.6
	Արթիկ	17.0-35.0	24.9	24.6	22.6
	Մարալիկ	15.0-33.0	22.9	22.8	22.9
Սյունիք	Գորիս	21.0-35.0	29.0	28.3	25.6
	Կապան	18.0-52.0	28.1	27.8	24.5
	Միսիան	17.0-37.0	27.0	26.9	23.2
	Քաջարան	13.0-30.0	18.2	17.1	13.3
Վայոց ձոր	Վայք	15.0-48.0	34.7	34.3	31.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	44.5	46.5	41.8
	Ջերմուկ	18.0-55.0	40.1	39.2	37.5
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	35.9	35.8	31.9
	Իջևան	23.0-50.0	40.1	39.7	37.7
	Բերդ	15.0-43.0	28.5	28.0	26.5

2003թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (աճը կազմել է 1.5%), իսկ տարեկան աճը կազմել է 9.4%:

2003թ. մարտին, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 347 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 101, մյուս մարզերում միասին վերցրած՝ 246: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 52.9%-ով, այդ թվում Երևան քաղաքում՝ 65.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 48.2%-ով: 2003թ. փետրվարի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.8%-ով, ընդ որում Երևանում՝ 46.4%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել է 0.4%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. մարտին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		մարտին 2003թ.	փետրվարի և 2003թ.	մարտին 2002թ.
Կենտրոն	210.0-990.0	377.0	358.0	265.0
Արաբկիր	160.0-580.0	265.0	249.0	158.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	151.0	143.0	99.0
Նորք-Մարաշ	185.0-640.0	286.0	278.0	212.0
Ավան	95.0-200.0	119.0	114.0	87.0
Էրեբունի	95.0-320.0	134.0	129.0	99.0
Շենգավիթ	85.0-260.0	129.0	127.0	87.0
Դավթաշեն	105.0-260.0	144.0	138.0	87.0
Աջափնյակ	85.0-230.0	128.0	123.0	87.0
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	129.0	124.0	88.0
Նուբարաշեն	55.0-110.0	62.0	57.0	40.0
<b>Միջինը Երևանում</b>	<b>55.0-990.0</b>	<b>174.9</b>	<b>167.3</b>	<b>118.9</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. մարտին Երևանում անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 4.5%, իսկ տարեկան աճը՝ 47.1%: Վերլուծության արդյունքում կարելի է կանխատեսել, որ Երևանում անհատական բնակելի տների շուկայական գների աճման միտումը դեռևս կպահպանվի:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ.մարտ /ԱՄՆ դոլար/		
			մարտ 2003թ.	փետրվար 2003թ.	մարտ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-105.0	81.8	80.8	73.4
	Ապարան	20.0-45.0	38.1	37.3	34.0
	Թալին	15.0-35.0	27.7	27.2	22.2
Արարատ	Արտաշատ	28.0-75.0	61.1	60.6	55.7
	Մասիս	27.0-80.0	61.5	60.7	60.1
	Վեդի	25.0-60.0	35.9	35.3	34.0
	Արարատ	25.0-60.0	36.8	35.4	33.9
Արմավիր	Վաղարշապատ	50.0-105.0	88.0	78.2	64.2
	Արմավիր	35.0-90.0	51.6	50.0	46.9
Գեղարքունիք	Մեան	25.0-60.0	36.1	35.7	32.9
	Գավառ	25.0-65.0	39.4	38.7	36.5
	Մարտունի	20.0-60.0	33.5	33.1	30.7
	Վարդենիս	15.0-40.0	20.8	19.9	18.8
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.0	66.6	63.5
	Ստեփանավան	20.0-50.0	32.6	31.7	31.4
	Սյիտակ	17.0-50.0	23.8	23.8	19.0
	Ալավերդի	18.0-50.0	25.4	25.9	22.7
	Տաշիր	15.0-35.0	19.4	19.1	18.2
Կոտայք	Արովյան	40.0-110.0	90.9	90.2	85.7
	Նոր Հաճն	35.0-80.0	53.6	53.0	49.4
	Բյուրեղավան	15.0-50.0	38.0	36.4	32.9
	Եղվարդ	23.0-65.0	46.8	45.9	41.4
	Հրազդան	25.0-65.0	39.4	38.7	35.4
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.4	84.1	79.5
	Չարենցավան	25.0-50.0	32.9	32.4	28.4
Շիրակ	Գյումրի	40.0-105.0	88.3	87.0	84.3
	Արթիկ	18.0-60.0	27.9	26.8	24.0
	Մարալիկ	15.0-55.0	23.6	23.4	20.6
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.9	30.6	26.6
	Կապան	25.0-55.0	30.6	29.1	27.2
	Սիսիան	18.0-50.0	27.9	27.4	24.7
	Քաջարան	15.0-30.0	18.6	18.1	16.1
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.3	35.6	30.7
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.7	48.0	48.1
	Ջերմուկ	25.0-60.0	42.6	41.8	38.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.8	38.4	35.9
	Իջևան	30.0-70.0	40.6	39.9	39.3
	Բերդ	20.0-50.0	30.4	30.1	25.7

2003թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (աճը կազմել է 2.2 %), իսկ տարեկան աճը կազմել է 10.7%:

2003թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հողերի 598 օտարման գործարքներ /351.66 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 21.61հա/: Հողերի 368 օտարման գործարքներն /317.87 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 555-ը հանդիսացել են առուվաճառքի, 41-ը՝ նվիրատվության և 2-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 143 գործարքներում /25.8%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. մարտին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 80.8%-ով, իսկ 2003թ. փետրվարի համեմատ՝ 14.7%-ով: Ընդ որում, 2003թ. մարտին հողերի առուվաճառքներից 28-ը իրականացվել են աճուրդների միջոցով պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ, որտեղ 19 բնակելի կառուցապատման /տնամերձ/, 1-ը գյուղատնտեսական նշանակության, իսկ 8-ը՝ հասարակական կառուցապատման հողեր են:

Ստորև ներկայացվել է 2003թ. մարտին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄ Ը	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/
Երևան	0	0.00	35	3.00	37	13.68	0	0.00	23	1.31	8	2.04
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	13	13.01	5	0.50	0	0.00
Արարատ	1	0.23	0	0.00	2	0.06	57	15.85	25	2.40	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	54	35.61	19	2.33	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	136	180.70	5	0.63	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	12	14.68	1	0.08	0	0.00
Կոտայք	0	0.00	10	0.88	0	0.00	17	8.22	24	2.21	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	48	40.84	8	0.53	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	7	2.86	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.03	1	0.08	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.09	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>1</b>	<b>0.23</b>	<b>45</b>	<b>3.88</b>	<b>39</b>	<b>13.74</b>	<b>345</b>	<b>311.77</b>	<b>112</b>	<b>10.16</b>	<b>8</b>	<b>2.04</b>

2003թ. մարտին հանրապետությունում վաճառվել են արդյունաբերական օբյեկտների հողերի 2 միավոր /0.37 հա/ Գեղարքունիքի մարզում և 2 միավոր /1.39 հա/ Երևանում: 2003թ. մարտին Երևանում գրանցվել է հողի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք:

2003թ. մարտին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 346, այդ թվում աճուրդ-վաճառքների 1 և

դատարանի վճիռով 1 գործարքներ, որոնց միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						9	3.03	1028.0	7300.0	2300.0
Ապարան						2	4.68	130.0	500.0	300.0
Թալին						1	1.80	200.0	1680.0	340.0
Ծաղկահովիտ						1	3.50	245.0	330.0	290.0
<b>Արարատի մարզ</b>										
Մասիս						8	1.21	730.0	3000.0	1000.0
Վեդի						14	6.48	710.0	7150.0	1100.0
Արտաշատ	1	0.23	1180.0	1180.0	1180.0	35	8.12	1040.0	6000.0	2000.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Վաղարշապատ						30	14.33	980.0	9200.0	2100.0
Արմավիր						12	5.26	670.0	4600.0	1250.0
Բաղրամյան						11	15.50	130.0	1000.0	375.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Վարդենիս						136	180.70	90.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Ստեփանավան						1	0.63	180.0	4000.0	320.0
Ալավերդի						7	7.73	380.0	5480.0	720.0
Տաշիր						4	6.32	50.0	400.0	230.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						10	6.33	520.0	10000.0	3480.0
Եղվարդ						5	1.55	660.0	6000.0	1900.0
Հրազդան						2	0.34	250.0	900.0	680.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						46	38.20	550.0	750.0	650.0
Արթիկ						1	1.48	140.0	2300.0	620.0
Անի						1	1.16	250.0	310.0	260.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Սիսիան						7	2.86	90.0	1400.0	220.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						1	0.03	370.0	3700.0	720.0

2003թ. մարտին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 101 առուվաճառքի գործարքներ, որից աճուրդ-վաճառքների 10 գործարքներ, որոնց պայմանագրային միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների
--	---	---

	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						4	2750.0	120.0	3800.0	2290.0
Ապարան						1	2260.0	120.0	670.0	310.0
Թային								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Մասիս						12	9390.0	280.0	3680.0	840.0
Վեդի						6	6844.0	120.0	1000.0	500.0
Արտաշատ						7	7750.0	180.0	2460.0	655.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Վաղարշապատ						13	16763.0	280.0	3700.0	1310.0
Արմավիր						6	6580.0	180.0	2440.0	700.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Մարտունի						2	2590.0	120.0	320.0	220.0
Գավառ						3	3710.0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
<b>Լոռու մարզ</b>										
Ստեփանավան						1	800.0	78.0	340.0	140.0
Գուգարք								78.0	3800.0	580.0
Սպիտակ								120.0	450.0	160.0
Ալավերդի								78.0	440.0	200.0
Տաշիր								78.0	180.0	130.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	6	4800.0	121.6	121.6	121.6	15	12587.0	180.0	4300.0	1560.0
Եղվարդ	4	4000.0	67.0	67.0	67.0	8	8200.0	180.0	2670.0	2050.0
Հրազդան						1	1320.0	180.0	4120.0	1330.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						8	5260.0	120.0	2500.0	450.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	130.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Միսիան								78.0	450.0	230.0
Գորիս								78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						1	825.0	78.0	990.0	290.0
Վայք								78.0	1000.0	210.0
<b>Տավուշի մարզ</b>										
Իջևան						1	940.0	78.0	1600.0	380.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0



Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. մարտին գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի անհատույց տրամադրման 6 գործարքներ:

2003թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 385 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.6%-ով, իսկ 2003թ. փետրվարի համեմատ՝ 4.9%-ով:

2003թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 28 բնակարանների, 11 բնակելի տների, 87 հասարակական, 6 արտադրական նշանակության օբյեկտների, 1 ավտոտնակի և 252 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. մարտին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 81 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. մարտի համեմատ, աճել են 11.0 %-ով, իսկ 2003թ. փետրվարի համեմատ նվազել են 12.9%-ով:

2003թ. մարտին հանրապետությունում վարձակալվել են 1386.05 հա ընդհանուր մակերեսով հողեր, որից 87.11 հա Երևանում: Մարզերում, բացառությամբ Երևանը, վարձակալված հողերից 1292.32 հա հանդիսացել են գյուղատնտեսական /որից 150.00 հա նախկինում պահուստային/, 3.04 հա՝ բնակավայրերի, 3.58 հա՝ արդյունաբերական օբյեկտների հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	4	257.00	24	201.85
Արարատ	1	50.00	8	125.30
Արմավիր	0	0.00	3	7.07
Գեղարքունիք	3	150.00	29	252.89
Լոռի	0	0.00	12	89.00
Կոտայք	0	0.00	10	69.92
Շիրակ	0	0.00	8	36.58
Սյունիք	0	0.00	5	37.90
Վայոց Ձոր	0	0.00	9	14.82
Տավուշ	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>8</b>	<b>457.00</b>	<b>108</b>	<b>835.33</b>

2003թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 400 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. փետրվարի համեմատ, աճել է 39.4%-ով,

իսկ 2002թ. մարտի համեմատ՝ 11.4%-ով: Ընդ որում, գրավադրման գործարքների 39.8%-ի իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /32.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.8%/, առանձնատների /11.0%/ և հողերի /34.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 185 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. մարտի համեմատ, աճել է 49.2%-ով, իսկ 2003թ. փետրվարի համեմատ՝ 31.2%-ով:

2003թ. մարտին հանրապետությունում գրավադրվել է 76.38 հա մակերեսով հողեր, որից 76.16 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 48.37 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2003թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 24 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.6 %:

2003թ. փետրվարի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 20.0%-ով, իսկ 2002թ. մարտի համեմատ՝ 47.2%-ով: 2003թ. մարտին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 28.6% :

2003թ. մարտին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 663 գործարքներ, որոնց քանակը 2003թ. փետրվարի համեմատ աճել է 8.9%-ով, իսկ 2002թ. մարտի համեմատ՝ 20.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.2%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.4%/:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***